

է, Պէրլինի դաշնագրին մէջ 61 ըդ-
յօդուածին արձանագրութեանն Անկ-
լո-թուրք դաշնագրին կնքութեանն ի
վեր մէկ ու կէս տարի կ'անցնի, և
Հայաստանի մէջ բարենորոգումներն
ոչ միայն քայլ մ'առաջ չեն երթար,
ոչ միայն վեհ. Սոյիստին անկեղծ
խոստումներն ու դիտաւորութիւնքը
միանգամ եւ կը փայլին... Իրենց
անդորձադրութեամբն, այլ և Հայաս-
տանի շատ տեղերը գործերն աւելի
կը վատթարանան, չարագործ տա-
րերը կը քաջալերին տեսնելով թէ
իրենց շահատիրութիւններն արդի-
ւելու համար եղած այս վերջին փորձն
ալ, որուն «Ընդհանուր ֆոնիտիւրի»
անունը կուտան, ի դերեւ եղած է, և
Հայաստանի խեղճ ժողովուրդն, որ
փայլեան մ'ազատ չմնար հարստա-
հարութենէ, իւր ամենէն օրինաւոր
յայտերուն մէջ այս վերջին անգամ
ալ խաղաղութիւն չգիտեր թէ ո՞վ է
աւելի յանցաւորն. — Իւր Ստեղծիչը
կամ բաժնի, թէ Բ. Դուռը...
Հիմա քննեմք խնդրոյն աւելի
ծանր մէկ կողմը: (Շարունակէ)

ՀԱՌԱՊԱՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 10 նոյ.
Սթէնլորտ լրագիրը կը ծանուցանէ
թէ Աւստրիոյ արտաքին գործոց նախա-
արդ Պարոն Լոնտոնէ Լոնտոն Լոնտոն
յայտերէն թէ թուրքիոյ մէջ բարենո-
րոգման գործադրութիւնն Աւստրիոյ
կարեւորութիւն մ'ունենի:
Սուտ կը հանուի այն զրոյցը թէ
Անգլիոյ նաւատորմը զրկելու դիտաւո-
րութեան նկատմամբ յայտարարութիւն
տուած լինի տեղութեանց:

Լոնտոն 10 նոյ.
Լոնտոնի Օսմանեան դեսպան Մի-
գիւրիւս փառանք չարաքնն օրն երկար տե-
ւակցութիւն մ'ունեցաւ Լոնտոն Սպիտ-
պալէի հետ: Լրագիրը կը հաւաստեն թէ
այս տեսակցութեան միջոցին ոչ միայն
քաղաքական բարենորոգմանը՝ այլ և եւ-
մտական ծրագրաց վրայ ալ խօսուեր է:

Լոնտոն 10 նոյ.
Այս առաւօտեան Անգլիական լրա-
գիրը հետադրեալ կը հաւաստեն թէ
Օսմանեան լրագիրը կ'աւտարարու-
թեանն ձեռք բազմութիւն ապացոյցներ
կը դառնան, որք Աֆղանստանի Էմիր
Շահուալ խանին դաւաճանութեան վրայ ոչ
ևս տարակոյտ կը թողուն: Ընդհանրա-
պէս կը կարծուի թէ Նազուկ խան
կապիտալ տիրի զրկուի իւրեւ պետա-
կան բանտարկեալ:

Լոնտոն 10 նոյ.
Թրանսիլանի (հարաւային Ալբանի) Է-
երկրէն եկած լրաց նայելով Պէրլինի վրայ
գրուած տրոց հաւատարմութեան զօնաւոր-
ութեան կը հանդիպի: Վարտմ ընել
յուզուելոյն վրայ քանի մը ագարակաց
փառաւորը զիջապէս մէջ յուզում մը
պատճառեց: Պաշտօնատարը և մինչև իսկ
դատաւորը թշնամութիւն կը ցուցնեն
Անգլիական կառավարութեան դէմ:

Բեդրապուրի 10 նոյ.
Ռուսական մամուլը Անգլիական նա-
ւատման Օսմանեան ջոկերը զրկելու դի-
տաւորութեան վրայ կը շարունակէ խօ-
սիլ և այս բանն իբրեւ յոյժ ծանր պա-
տահանութիւն մը կը ներկայացնէ,
որուն հետեւանք պիտի լինին երեք Նե-
րոպական խառնաշփոթութիւնը: Ռուսա-
կան Վորոյ լրագիրն իւր այս առաւօտ-
եան թուով հրատարակած մէկ յօդուածը
սա կերպիւ կը վերջացնէ. — «Վաւերա-
կան աղբիւրէ գիտեմք որ Ռուսական
կառավարութիւնն Անգլիական նաւա-
խանի մը Սե. ծով մոտեցը պատերազմի
պատճառ պիտի նկատէ:»

Պէրլին 10 նոյ.
Լրագիրը կը ծանուցանեն թէ Ռու-
սիոյ և Գերմանիոյ միջև առևտրական
յարաբերութիւնը ժամանակէ մ'ի վեր
շատ նուազած են:

Պէրլին 10 նոյ.
Ռուսիոյ դահաճաւանդ կայսրորդի
Ալեքսանդր մեծ զուգան այսօր Պէրլին
կը հասնի, Լրագիրը կը հասնի թէ սխալ է
քաղաքական կարեւորութիւն մը տալ այն
այցելութեան:

Պրիմարը իշխանին առողջական վի-
ճակը բարւոյնացաւ: Իւր բժիշկը Տօքթ.
Նիքոլը յայտարարեց թէ իշխանը վե-
տանդէ դերձ է այժմ:

Փարիզ 9 նոյ.
Այսօր ձերակոյտի համար երկու ընտ-
րութիւնը կատարուեցան: Մարտի Գան-
րօպէր Գարանի Գաւառին մէջ ընտ-
րուեցաւ, և Պ. Ժուլիէր հանրապե-
տական ալ Հոթիլ Ալը դաւառին մէջ:

Այս առաւօտ հասած հեռագիրէ
Բեդրապուրի 10 նոյ.
Թրանսիլանի մէջ գործող Ռուսա-
կան զօրաբանակին հրաման եղաւ տե-
ւակցութիւն յայտարարելու իւր օգնութիւն
ընդունի:
Չարին մէկ հրամանագիրն Աւստրիոյ
և Գերմանիոյ կայսերաց անունները կու-
տայ երկու նոր հրապարակ:

ՆԵՐՔԻՆ, ԼՈՒՐՆԵՐ

Եղած որոշման համեմատ, չարաքն-
ն օրը մարտաւար հաղթանքներն մեծ-
կակ դուռներ մը փճարուեցաւ կառա-
վարութեան միւ մատակարարներուն,
որք երկար ժամանակէ ի վեր ստակ
առած չլինելով, Բալաները չտալ ըս-
կըսած էին:

Մայրաքաղաքի Մօնիթօր Տիւ-
ֆօմէրս լրագիրն իր երէկուան թը-
ւով կը ծանուցանէ թէ Վերմի ԶԱ-
ՉԱՐ հակահաստիւնեան Հայք երէկ
Գուռ-ճալիւսի պատրիարքարանն եր-
թալով, Գրիգորեան եկեղեցւոյ դիւ-
րը վերադարձեր են:

Ստոր կըսեն զուրկ գործոց երե-
ւակայութեան:

Հալիպոլի հեռագիրն երէկ կը
ծանուցանէր թէ Լօպանօֆ իշխա-
նը Ե. Պարս վերադարձած է Գրան
Նիւտմամբ Ռուսիոյ ընթացիկ մէկ
վերջնական յատակադրումը, Մօնի-
թօր Տիւ ֆօմէրս ի լրոյ կըսէ թէ
Օսմանեան կառավարութեան Ռուսա-
կան յատակադրման հաւանութիւն
յայտնուէ պատասխանը Լիւստիա
տանելով Չարին մատուցանելու պաշ-
տօնն Օսման փաշային յանձնուեր է
եղեր:

Այս առթիւ աւելորդ չլինի ե-
րէկուան վաղըթի մէկ հաւատարմ-
յիւնը, յորում թուրք լրագիրը կը-
սէր թէ Ռուսիոյ ապագայ աշխարհ-
հավարութեան վրայ Լօպանօֆ իշխա-
նին կողմնէ Բ. Դրան հաղորդուե-
լիք կամ հաղորդուած ծրագիրը՝
Երկրի հաղորդութիւնն հակաշուքու հա-
մար յատակադրման մէջ Ռուսական
դիւանագիտութիւնը ժամանակէ մը
ի վեր մեծ զօնաւորութիւն կը ցու-
ցնէ, և հետեւաբար Սերպիա, Ռուսա-
նիա, Պոլլարիա և մինչև իսկ Գարաաղ
զատ դատ և առանց առաջնորդի կը
գործեն, Վիեննայի վերջին համա-
ձայնութեան իսկիւ, Ռուսիոյ դիւա-
նագէտը թուրք-Ռուսական համա-
մաձայնութեան մը հարկին վրայ կը
խօսին: Այս դիւանագիտաց երկու
մասի բաժնուած են, մին կը յանձ-
նաւարէ համաձայնութիւն մը, որուն
Անգլիա ալ պիտի մասնակցի, իսկ
միւսը Ռուսիոյ և Բ. Դրան միջև դաշ-
նակցութիւն մը նախապայտու կը հա-
մարի: Ըստ վաղըթի, տակաւին
յայտնի չէր թէ Բ. Դուռն ինչպէս
պիտի ընդունի այն յատակադրումը:

Մօնիթօր Անգլիական լրագիրը
թէրճէմանը Հալիպոլի լրագրին պա-
տասխանելով կըսէ թէ բարենորոգ-
ման նկատմամբ Անգլիոյ յանձնա-
բարութեանց ուժ տարու համար
Անգլիական նաւատորմը թուրքա-
կան ջոկերը զրկելու դիտաւորու-
թիւնը նոր կամ անապարանայ ար-
դիւնք չէր: Ամիսներ առաջ, լորտ
Սալիսպլըրի կողմէր զրկել զայն, և
Հօրնպի ծովապետին նաւատորմն
ընդունելու համար Պէրլինայի մէջ
ամեն պատրաստութիւնը եղած էին:
սակայն այն ժամանակ Ե. Պարս մէջ
Սեր. Հ. Լէյքըրի եղած յայտարարու-
թեանց վրայ, Բրիտանական դեսպա-
նը զօրաւոր դիտաւորութիւնները բրաւ
նաւատարմը զրկելէ ետ կեցնելու
համար Անգլիոյ կառավարութիւնը,
և Բ. Դրան կողմնէ այն ժամա-
նակ տրուած ինչ ինչ բացօթյա խօսա-

մանց վրայ, Հօրնպի ծովապետին հը-
րաման եղաւ, որ քիչ մը ժամա-
նակ Անգլիական կողմէր միջև եր-
թակեցէ յետոյ, նաւատորմը Մալ-
թա տանի: Արդ, Բ. Դուռն այն ժա-
մանակ տուած խոստումները չարա-
հեց: Եթէ պահած լինէր, կըսէ Մօ-
նիթօր արեւ ֆօմէրս, թուրքական
լրաց մէջ նաւային ուրիշ ցոյցն մը
խօսք չէր լիներ:

Կառավարութիւնն իւր ստիպու-
ղական պիտոյից համար առայժմ
քսան և հինգ հազար տակոյ փոխա-
ռութիւն մ'ըրաւ այն անապառ դա-
ձէն՝ զոր «Գալաթա» կանուանին:

Գաղղիոյ Լիոն քաղաքէն կը դը-
րեն թէ Չարաբերն Պ. Ռաֆայէլ ա-
նուն հայազգի մը որ երկու տարիէ
ի վեր յիշեալ քաղաքը կը բնակի ե-
ղեր, տակ թեւեւաւ չինու թեան հա-
մար մեքենայ մը հնարած լինելով,
Գաղղիոյ կառավարութիւնն արտօ-
նադիր մը տուեր է անոր:

ԱՅԿԱՅԻՆ

Ահաւասիկ Կիրակի օրը Պատ-
րիարքարանի մէջ կարգադրուած ու-
ղերմներուն և Ս. Պատրիարք Հօր
պատասխանին պատճենները:

Գեր. Օրմանեան Մաղաթա Վարդապե-
տի:

Ամենապատիւ Սրբազան Պատ-
րիարք Հայր:

Յանուն իմ և ի դիմաց ինծի հետ
հոս եկած անձանց, և այլոց որ բա-
նաւոր պատճառաւ մը դալ խափա-
նեցան, և ընտանեաց և զուտկաց
նոցին, որոց ամենեցուն անունները
մասնաւոր թերթի մը վրայ դրուած
Ձեր Բարձր Սրբապետութեան կը ներ-
կայանէին: Դատաւարութիւնը ինչ-
պէս որ լինի այս վայրկեանէս մեր վրայ
Հայոց Պատրիարքարանի կատարեալ
իրաւասութիւնը Ձեր Բարձր իշխա-
նութեան հովանաւորութեան ներ-
քեւ, և բարձած կը համարուի այն
ամեն կրօնական և ֆարաքական
խորութիւններն, որոնք ցարդ զմեզ
հեռու բաժնուած կը բռնէին Հայ
Ազգութեան կեդրոնէն, և կը խնդ-
րեմք որ հրամայէր որպէս զի մեր
անուններն ալ օրինաւորապէս ար-
ձանագրուին Պատրիարքարանի մեծ
տումարին մէջ:

Պէտք էր որ ըստ Հայազգիք
միտին և միաբան միմարին, մի հա-
սարակութիւն և մի եկեղեցի ըլ-
լային միշտ. բայց մեր խեղճ ազգին
թշուառութիւններէն մէկն ալ այս է
որ մտացածին և արտաքին տը-
պարմած պատճառաց համար դա-
նազան մատուր բաժնուեցանք, և
թեպէտ բուն մարմնոյն դուրսիւնը
չլուանդեցաւ, բայց ոչ այստ. թեպէ
ինչ է որ մասնաւոր բաժնիներ, մաս-
նաւոր ուղղութիւններ ստացան և
հակադրային դիմամարք տուաւ ը-
նտ գործոց ալ ձեւանակեցին:

Ոչ այսօր է, Սրբազան Հայր, որ
ազգային և ազգասէր ըզձից բորբո-
քը կզգամք մեք՝ որ առ սոս Սրբ-
բապետութեանք մեր որոշողութիւնը կը
յայտարարուի: Շատանց այդ կրակը
մեր սրտին մէջ փառեցաւ, և որ-
չափ հնար էր մեզ՝ աշխատեցանք և
ճգնեցանք որ այդ ըզձից յաղաղ-
մը տամք՝ առանց շատ այլայլելոյ ի-
րաց վիճակը, զոր ժամանակը առանց
մեր կամոց ստեղծեր էր: Մեր նա-
խընթացը ծանօթ է Ձեր Բարձր
Սրբապետութեան և Պատուարժան
ազգայնոց որ Ձեր և մեր շուրջը բա-

ւարած են, ներքեցէր որ ծանօթ ի-
րեր նորէն չկրկնեմ: Այսօր մեր բա-
րեկիտ փորձերուն շրջանը աւար-
տած է, համարձակ կուգամք կա-
տարել մեր ըզձից պարզ բացայայ-
տութիւնը, այնչափ աւելի համար-
ձակ ուղղութիւն անխաղախ սրտի և հա-
ւատարմութեամբով վկայութիւնը
կզգամք մեր խղճին թաքնութեան
մէջ: Փորձն ալ մեզի ցուցուց այն
ճշմարտութիւնը, թէ ով որ անկեղ-
ծաբար ազգասէրութեան հետեւող է
և ազգօգուտ գործոց հետամուտ,
պէտք է որ ազգային կեդրոնին հետ
միացեալ և անոր ենթակեալ ըլլայ
բոտ ամենայնի. ազգային կեդրոնէն
դուրս ազգասիրութիւն մը՝ ազգա-
սիրութեան կերպարանն է, և ար-
դիւնաւոր չէ: Ահա, Բարձրաշնորհ
Հայրապետ, մեր սրտին անկեղծաւոր
յայտարարութիւնը, ահա մեր հա-
ւատոյն անկեղծաւոր դաւանու-
թիւնը:

Ուրախ եմք որ մեր այս յայտա-
բարութիւնը և դաւանութիւնը Ձեզ
նման Ազգասէր և Հայրենասէր Պատ-
րիարքի մը կ'ուղղեմք, որ ոչ թէ ի
պաշտամանէ միայն կը ներկայացնէ
մեզ Հայրութեան կեդրոնը, այլ որ
գործով և արդեամբ անձնաւորած է
յինքն Հայրութեան բաղդը և ապա-
դայն: Դուք, Սրբազան և Ամենա-
սիրելի Հայր, դուք առաւել քան
դամենայն ոք ի միտ առիւթ Հայուն
թշուառութիւնները, և ոչ նուազ
Ձեր մտադրութեան աւարկոյ ըրիւք
արտաքին հարստահարութիւնները
քան թէ ներքին բաժնուեցանք, և
եթէ Ձեր բաղձնաքնն և ջանքն, աշ-
խատանքներն և զոհողութիւններն ի-
րենց կատարեալ արդիւնքն առաջած
ըլլային, մարթ էր ըսել թէ այսօր
առաջիններն ինչպէս և վերջիններն
անհետացած պիտի լինէին. սակայն
դատաւոր զեղծմամբ արժանաց-
եալ չարք ըն ինչպէս նայն հետայն
Շնչուի: Բարձրեան Ստուած, նա
որ իւր անքննելի նախախնամու-
թեամբ պահպանեց Հայուն ազգը
և Հայուն եկեղեցին բաղդաբար մէջ, նա որ
փորձանքները կը ներէ՝ մինչ և վեր-
կութիւնը կը պատրաստէ, յուսոյ նը-
շնները ծագել սկսաւ, մեք ալ մեր
գործով և մեր օրինակաւ կը փու-
թամք չարքներէն մին բուժելու
ճանրայ բանալ, որպէս զի և միւ-
սոյն բարձման աշխատակից և գոր-
ծակից ըլլամք: Վատահոլութեամբ կը-
սեմ թէ ոչ մեզմով կ'աւարտի միւս-
թեան և միաւորութեան հետամուտ
եղողներուն շարքը. ուրիշներ ալ
կան մեր ետեւէն և ոչ քան զմեզ նը-
ւաղ զգածեալ ազգասիրութեան ըզձիւք
իցիւ թէ այդ շարքը չգոցուէր բայց
եթէ՝ երբոր Հայազգեաց թիւը լրա-
նար, և ամենքին որք Լուսաւորաւ
լուսաւորեցան, Լուսաւորեան հօտը
միութեամբ լուսաւորէին:

Ահա, Հայրք. Ազգիս, ներսխանաց
անուանակից և հանդիսապատիւ,
ամբարձ Սուրբ Աղբ, որով Հայաս-
տանեայց փրկարար դար մը պատ-
րասեւ ձեւանակեցիք, օրհնէ մեր
անկեղծ բաղձանքը, և սիրով ըն-
ընդունելութեամբ միմարէ մեր
սիրտերը, զօրացուր զմեզ անառա-
ւանդ օրհնութեանը շնորհիւ, զօրա-
ցուր զիս ի մասնաւորի որ Սրբոյ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ կարենամ
լինիլ մշակ առանց ամօթոյ, որ ա-
մենքնիս ալ ապրիմք և գործեմք մի
և անբաժին ազգութեան սասարկիւն
մէջ ընդ հովանեաւ և ընդ հովու-
թեամբ Ամենապատիւ Սրբազան
Պատրիարք Հօրք:

Ա. Բ. Ս. Պատրիարք Հ. Ե. պատրիարք

Անցեալ Զատիկին, երբ պատուեցին զիս Զեր այցելութեամբ մեր խոնարհ բնակարանին մէջ և ոյտաբուղի խօսքերով Զեր առ ազգն և բուն եկեղեցին ջերմ սէր յայանցիք իբրեւ պատգամաւոր ի դիմաց բազում եղբարց, ես որ արդէն թէ՛ զԶեղ և թէ՛ Զերկ հետ այն օրը չընկերացողներէն շատերը կը ճանչնային և կը ճանչնամ, և որոնց և Զեր հոգւոյն թափանցած էին և եմ որ թէ՛ դուք և թէ՛ անոնք մէկ մէկ թանկագին և պատուական և բուսաւոր ջանքերէք Հայոց ազգին, և Հայոց դարաւորին գեղեցիկ և պարզատու ծառերն, որ ոչ Զեր կամաւ՝ այլ ժամանակին բերամբ մեր դրացւոյն սրահն և պարտէզը փոխադրուած կը դարդարէիք, համամիտ, համաձայն և համախորտ ըլլալով Զեր բուն եղբարց հետ, և Զերմէ ու անոնցմէ շատերը Հայութեամբ կը պարծէին և կը պարծին ցարդ, անոնցմէ և Զերմէ շատերն ազգային գրական նութեմք և դատարարութեամբ կը զգարէին և կը զգարային, Ազգին համար կաշխատէին և կաշխատին, այսօր Զեր հարց և հաւուց տունը և պարտէզը կուգայք զարգարել և փառաւորել, ոչ թէ մեր թելադրութեամբ կամ հրապարանօք, այլ Զեր ընդարդոյ ազգասիրութեամբն և փորձ ու ծագիկալ հանձնարով, թերեւս մեծ, փառաւոր և անկեղծ եալ էր դրացւոյն պալատը, և ընդարձակագոյն այն պարտէզն որ կը գտնուէիք, և թերեւս անպաճօց, անդարդ և ոչ այնչափ ընդարձակած առաւ և այս տուն ու պարտէզ ուր եկայք, բայց զիտէք և գիտցաք որ Զերն է այս տունը և պարտէզը, հոն հիւր էիք, հոս բռնիկ էք, այն Զեր տունը չէր, այս է Զեր խրճիթը, դուք Հայաստանի դրախտին գեղեցիկ ծաղիկներ և փափուկ ծառեր, ընդ հեռաւոր երկիւստ, ընդ օտար աստեղօք, Զեղ անընդել կլիմայի տակ արուեստին խիստ օրինօք նեղ ու անձուկ թաղարներու մէջ հաղիւ արեւուն փօքը ճառագայթին ընդունելով իսկ կաճէիք արդարեւ, զի Զեր սերմն օրհնեալ էր և Զեր արմատն օրհնուած Հայաստանեայց օրհնեալ եկեղեցիէն, զի գաղթեալ էիք Բիւրակներէն աստուածատունի դրախտէն, որ աղիւնարուղի քառափակ գետօք կուռգիւր, եթէ այն արուեստակեալ ձը մերոյն մէջ աճեցայք, հիմայ որ բուն Զեր հայրենի պարտէզը կուգայք, ես վստահ եմ որ թաղէի և Բարթոլոմէոսայ, Գրիգորի Լուսաւորչի, Ներսիսեանց, Վարդանանց ներշնչող հոգին գերաբուն զԶեղ եօթնարփեան շնորհօք պիտի աճեցնէ և բեղմնաւորէ ի փառն Հայաստան աշխարհի և եկեղեցւոյ:

Հիմայ որ Զեր հայրենի տան սեւ մերէն ներս ստը կրեցիք, կը խընդրեմ չընդադայեցէք ամէն կողմ և տեսէք թէ ինչպէս ընտելն չէ փոխուած, Զեր բուն բաղնիքի եղբարց ներս, որ այս տան մէջ մնացին, թէ՛ յաջողութեան մէջ և թէ՛ ճախորդութեան մէջ ջանացին կանգուն պահել այս տունը: Փայցին տարբէն հոգմունք, փրթման ահագին փոթորիկը, յարձակեցան ամեն թշնամիք, և որ ամենէն աւելի դժուարին և վշտալիցն է, ջանացին պղծել սորտ հիմունքն ընտանի թշնամիք, այլ կանգուն մնաց Զեր հարց տունը և չկործանեցաւ, զի ի վերայ հաստատուն լինին այսինքն ֆրիտտոսի հիմնեալ էր և ոչ ի վերայ մարդոյ: Տե-

սէք, ընտելեք և պատմեցէք մեր բացառիկ եղբայրներուն թէ ինչ վիճակի մէջ որ էր հաղար հինգ հարկեր տարի յառաջ, նոյն վիճակին մէջ է այսօր, ոչ աւելցած և ոչ պակասած: Այս ճան առաջին վերակոյտներն, Գրիգոր Լուսաւորչի, Սահակ, Մեհրոպ, Ներսէս, Մանգականի և այլն, ինչպէս որ կարգադրեցին, նոյն կարգադրութեամբ կընթանայ ցայսօր, և մեր պատուական դրացւոյն Հրապարակեցոյ և Յունաց տուններուն՝ այսինքն եկեղեցեաց մէջ դըժտութիւն և հերձուած և իրենց գործածած բառերովը շատ մը անվայել բաներ պատահեցին և զիրար դատարարութեան շատ ետքը, տեսէք Շնորհալին Ներսէս՝ այս տան վերջին դարերու մեծ վերակոյտն՝ ինչ արթնութեամբ և խոհեմութեամբ պահպանեց այս տան կարգադրութիւնն՝ առանց անոնց վէճերուն մէջ մտնելու, յարգելով միշտ իւր գործաւոր դրացիներն, այլ պահպանելով իւր տան ինքնօրինակ լինելը որ ի ֆրիտտոսէ անտի ունէր: Տեսէք և պատմեցէք թէ Զեր և մեր Սրբազան հարց շնորհիւ և քարոզութեամբ և կանոնադրութեամբ՝ ֆրիտտոսի Աւետարանն է միայն մեր եկեղեցւոյն հիմն և կանոնն, և այն ամեն կանոնք և աւանդութիւնք և վարդապետութիւնք որ չեն համաձայն այս սրմ անկողին Աստուածային կանոնաց, չեն ընդունուած և չպիտի ընդունուին յաւիտեան:

Տեսէք և պատմեցէք թէ բուն Զեր տան մէջ էք հիմայ, թէ ինչ որ այլուր իբրեւ շնորհք կը խորհէիք, հոս իբրեւ Զեր իրաւունքը պիտի վայելէք, Զեր հարազատ եղբարց հետ, որոնք իրենց պարտքերն անթերի կը կատարեն, Ուրախ եմ ես, և ոչ միայն ես, հապա ընդոք եկեղեցականք և աշխարհականք, Զեր հայրենի և եղբայրներն, ցնծութեան տօն կը կատարենք այսօր, և ոչ միայն մեր տատ յերկրի, այլ և Հարք մեր ի յերկինս:

Դուք մեզի դառն իրաւասութեան խօսք կընէք, բայց ես Զեղ կըսեմ, թէ ես այս բանին վրայ լոկ մարմնաւոր աչօք չեմ նայիր, այլ իմ հոգիս կը խայտայ երբ կը տեսնեմ որ կը կատարուի այժմ մեր Աստուածային Վարդապետին աղօթքն և իղձը: «Հայր, կամի՛ր զի սուք մի իցեն որպէս և մեք մի եմք»: Յաւերժապետ և օրհնեալ ըլլայ այս միութիւնը: Մեր Տէրը մեզի սուրբեցոյց աղօթելով միշտ այսպէս: «Եղիցին կամքք»: Աստուած կը կամի որ միանանք և սիրենք զիրար, իսկ մարդիկ կը կամին որ բաժնուինք և չսիրենք զիրար: Խնդրեցէք և խնդրեմք որ Աստուծոյ կամքն ըլլայ: Ֆրիտտոս մարդացաւ ոչ զմարդիկ միայն, և Աստուծոյ Հօր որդեգրելով՝ բոլոր մարդկութեան Աստուծոյ Հօր մէկ ընտանիք կազմէ: Եթէ բոլոր մարդիկ պարտաւոր են միանալ, հասցա ինչպէս չմիանան մէկ աղբի անդամներ՝ որոյ միութիւնն անհրաժեշտ է վրան երկնային և վրան երկրային կենաց: «Միութիւնն ծնող բարեաց, անմիտ բանութիւնն ծնող չարեաց»: Միտանանք զօրանալու համար, չբաժնուինք տկարանալու համար: Ըսէք, ըսենք մեր բացառիկ եղբարց որ փութան դալ խառնուիլ իրենց եղբարց հոծ բաղնիքեան մէջ, զի այս է իրենց տունը, այս իրենց դաշտը, այս իրենց բնիկ հողը: հոս ազատ օդ կը ծծեն, հոս կը զարդանան և կուռճանան: Իրենց բնական երկիրն է այս, իրենց երկիրն ջրովը կուռցին, և իրենց հարց Աստուածն հոս կը

հսկէ իրենց վրայ: Իրենց տան մէջ են բոլ և դարձեալ կըսեմ, երբ հոս գտնուէ՛ք այս տան որդիքն կըլլան, և ոչ ծառաներն: Մեք այս տան վերակոյտ սպասուողներն եմք, զորս իրենց եղբայրներն համահաւաքուելով կընտրեն: Հոս քահանայներ կան՝ չէ թէ հեռուէն եկած, այլ իրենց մէջ ծնած, անած, իրենցմէ ընտրուած, և իրենց ընտրած Եպիսկոպոսէն ձեռնադրուած: հոս Եպիսկոպոսներ կան որ Ազգին ընտրած կաթողիկոսէն օծուած են: հոս այս եկեղեցւոյն առաջնորդները, Պատրիարքները, կաթողիկոսները, որոց պիտի հնազանդէք, Ազգին և Եկեղեցւոյն ազատ կամքն ընտրուած են, և նախապէս իրենք կը հընտարանք և հնազանդելու պարտաւոր են այն կանոններուն և օրէնքներուն որք անձամբ չեն Զեղ, զոր մեր հայրերը կարգադրած են, և որոց ուսումը մասնաւորաց սեպհականութիւնն չէ եղած մեր մէջ, և որք չեն փոխուիր ըստ քմաց:

Հոս Զեր սրբւոյն և ընտանեացն հետ յաճախ յարաբերութիւն ունենցող և հոգեւոր մատակարարութիւններ կատարող եկեղեցականները Զեր մէջէն շատերուն պէս ամուսնացեալ հայրեր են և զաւակներ ունին: Հոս ընդարձակ դաշտ է աշխատելու: Ըսէք մեր եղբարց որ գտն միանան մեզի, ձեռք ձեռք տանք, փառաւորինք, քրտինք թափենք մեր հայրենի երկրին վրայ, զի «Հունձք բազումք են և մշակք սակաւք»: Օտար երկրի մէջ և օտար երկրի տակ կը հալին և կը ծլուրին մեր հայրենի բոյսերն: Ինչ գեղեցիկ հանձնարքն աւանդուած անցան, ինչ աղքատքն սիրտներ կան այսօր, որ այս տունէն հեռու՝ բայց այս տան համար կը բաբախեն՝ ազգաց Ովկիանոսին մէջ կանեւեղութիւն և կանհետանան աւանք՝ որ կը բաժնուին այս տունէն: Ուր են լեհաստանի բաղնիքի Հաւիտէն, ուր Եւրոպայի քաղաքացի Հայ բնակիչներն, ուր կը լինին Հունդաւրից պատուական Հայերն, բնէք որ գտն միանան մեզի, աշխցին մեր ճգնաց և աշխատութեանց: Դպրոցներ բանանք, բացուած դպրոցներն յառաջացնենք, ուսումն և դիտութիւն և արհեստ եւ ծագիկեցնենք: Թող ընկերական և ազգային հոգին զօրանայ ի մեզ, և փոխանակ միմեանց հակառակ և անջատարար դործելու, և մեր անհատական ոյժերն իրարու դէմ դործածելով սպառնցենք, մեր զօրութիւններն ամփոփեմք ի մի, և ազգին միահաղոյն յառաջդիմութեան համար գործածենք զանանք: Գառաւառն յիսուն տարուան տխուր փորձն զմեզ բաւական առաջ և որ մեզմէ աւելի ես մնացած ազգեր՝ մեզմէ աւելի յառաջ գացին և մեք շատ ետ մնացինք, քանզի իրարու դէմ մարտեցանք և զիրար կործանել աշխատեցանք: Այս, ալ պէտք է գտն և միանան մեզի հետ, և Դուք որ այսօր միացայք, ազգասիրական մեծ դարձ կատարեցիք: Դուք կընստաւորութիւն չըրէք, այլ ձեր տունն եկաք, ուր ծնած ու անած էին Զեր հայրերը: զԶեղ պիտի օրհնեն Հայաստան, դարք ապագայ և Աստուած հայր Միութեան: ԶԶեղ կ'օրհնեմ և ես յանուն իննեւ տասն դարուց արեամբ նահատակեալ ամենատարբեր Հայաստանեայց եկեղեցւոյ: Եւ յանուն Զեր չորս միլիոն եղբարց կըսեմ Զեղ: «Բարի եկայք, հաղար բարի: Եւ մեր միւս բացառիկ եղբայրներն բարով գտն հաղար բարով:»

Երանան Մեծ: Թոմաս Եփեսոսի Ժողովոյ
ՈՒՂԵՐԸ
ԱՌԱՄԱՆԱՊԵՏՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Երանան Եփեսոսացի
Իր խոստովանութիւնը սրտաթուղդ փրկած ըլլալով, Ա. Բ. Ս. Պատրիարք Ա. Ս. Ն. ՊԱՏՐԱՐԿՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ: Այս այնպիսի բարեխոսութիւն է, զոր ըզգացած են ամեն անհոգ, որանք կեանքեցեալ մէջ բարեբաղդ տալիք ունեցած իրաւաստաւոր պարտք մը լրջօրէն կատարելու: Այդ գահու թեմաք լեցնող պարտքերէն մին է մեր կատարածն ալ, անցելոյն տը խուր ժառանգութիւնն եղող բաժանման կեղծը բառնալու փափաքաւ առ Սրբազան թեմաք եկած ըլլալին: — Իրաւ՝ Հայ ազգը յիւր ընդհանրական փարախն ամփոփելովն զմեզ նշանաւոր փաստով մ'ըրած չեմք համարել, բայց որովհետեւ կը հաւատամք որ բարի գործոյ մը օրէնակ պիտի ըլլամք, թէ և ոչ առաջինը՝ մեզմէ աւելի յեռնեցոյ, այդու միայն գուցէ պարծենալու: Եւ իրաւունք ալ ունենանք:

Ներքեցէք, Սրբազան Հայր, այս սրտի վեղմնաց: Բայց կը փափաքեմք որ լաւ հասկցուած ըլլայ թէ այսօրուան մեր գործը այն համալման հեռանքն է, զոր մեր ազգային պատմութեան վրայ խորհրդածել սկսած օրերէնս ի վեր՝ տածել, հաշուել և պատրաստել եմք ի խորս մեր սրբախն: Իր կրկնմամբ՝ Ներքեմք ուրեմն մեր հարց անցեալը քառելու: Երջանիկ եմք, որ Զեղ պէս ազգապետի մը Հայրական իշխանութեանը օրուան դիպեցանք, սրուն ներդաւաժաւ (թօթեան) սղին Հայ ազգին եկեղեցւոյն պատկերն է: Բարեբաղդ կ'զգամք ինքզինքն ի լուր աշխարհի բարձրաբարբառ այդմ՝ կարեւոր վկայելու: և այդ Հայ եկեղեցւոյն պարծանքն եղող սկզբունքը փառաբանելով ըլլայ մեր միակ յանդիմանութիւնը՝ զոր կուգի մը առ Հոսմէ մէտական եկեղեցին, որ միշտ օտար մնացած է այդ սուրբ սկզբունքէն, իւր բոլոր եղբայրատեսեաց հեռեւանքներով: Այդ եկեղեցւոյն խորատ յաւակնութեանը տանիք չկրկնող Հայ մարմին մը կար, որուն տարին ներքէ ի վեր մենք ալ մոտ կազմեցինք: Թող ներուի մեզ, Սմեռապատիւ Սրբազան Հայր, որ այդ մարմնոյն համակիր ողջոյն մ'արձալեմք, վրան զի մեք քան զամենն աւելի լաւ կը ճանչնամք անոր կըրած ծանր յոգնութիւնը, անոր կըրած տառապանքը՝ ամբարտաւան թշնամոյն երեսէն: Իցիւ թէ յաջողեցինք ամենքս ի մասին Սրբազան Հօր Հօրք բաղնիքը մէջ Ազգային միութեան երանաւեալ դարձնելու իրականացնելու: Բայց զայն որ մեր փափաքն ու ջանքը չյաջողեցան, յուսումը և հաւատամքը որ Սրբազանութեանը պիտի շնորհեն երկինք, վկայ այն Զեր գործերը, որոնք ուղղեալ են յօգուտ ամեն Հայ արեւն կրողին՝ առանց խորութեան կրօնից տեղոյ և լեզուի:

Թոմաս Երանան
Կոստանդնուպոլիս
1879 Հոկտ. 28

Ազգային ժողովոյ Ատենայեալ վսեմ: Ստեփան փաշա Աղանեան ալ յանուն Ազգային ժողովոյ յայտարարեց թէ իրենք այլ ևս Հայ քաղաքացիութեան իրաւունք պիտի փոխեն և ազգային Սահմանադրութեան ընտրական իրաւանց պիտի մասնակցին:

